ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ

(Կազմված է «30»հուլիս 2024թ. և բաղկացած է 3 **(երեք) էջից)**

ք. Երևան, Արշակունյաց 5.108 սենյակ 30.07.2024թ., ժամը 16:30

Համաձայն Արդարադատության նախարարություն մուտքագրված 04.04.2024 թ.-ին <<Հայէկոնոմբանկ >ԲԲ ընկերության գործադիր տնօրեն Ա Առաքելյանի դիմում -բողոքը <Ուստր -Մամիկոն > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ներկայացված թիվ Մ/22576-2024 դիմումը Հովհաննես Եղյանի գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության մասին կարգապահական վարույթ հարուցելու հարցը քննարկելու նպատակով ս/թ.-ի մայիսի 2-ին 25-ին հրավիրված է Կարգապահական հանձնաժողովի նիստ:

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

<Ուստր -Մամիկոն > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը

<<Հայէկոնոմբանկ >ԲԲ ընկերության ներկայացուցիչ Նարեկ Արայիկի Սահակյանը համապատասխան լիազորագրով 09/3-75/103

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝

Հանձնաժողովի Նախագահ՝Արմինե Մովսիսյանը

Հանձնաժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը

Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը

Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը

<Ուստր -Մամիկոն > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի կողմից ներկայացվել էր գրություն ,որով խնդրել էր նիստը անցկացնել իր բացակայությամբ :

<<Հայէկոնոմբանկ >ԲԲ ընկերության ներկայացուցիչ Նարեկ Արայիկի Սահակյանը

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

Սույն թվականի 04.04.2024 թ.-ին <<Հայէկոնոմբանկ >ԲԲ ընկերության գործադիր տնօրեն Ա Առաքելյանի դիմում -բողոքը <Ուստր -Մամիկոն > ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի ներկայացված թիվ Մ/22576-2024 դիմումը Հովհաննես Եղյանի

գործողություններում կառավարչի վարքագծի կանոնների խախտման հնարավոր առկայության քննարկման հարցը.

ԼՍԵՑԻՆ

Կարգապահական հանձնաժողովի նախագահ Արմինե Մովսիսյանին, ով առաջարկեց հանձնաժողովի անդամներին քննարկել սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը: Հանձնաժողովի նախագահը ներկայացրեց բողոքաբերի բողոքը և առաջարկեց սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

Հարցի վերաբերյալ ելույթի ձայն վերցրեց հանձնաժողովի անդամ Ռուբեն Խալաթյանը և հայտնեց որ ուսումնասիրելով սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի կողմից ներկայացված դիմումը ,որով հայտնում էր ,որ 09 հոկտեմբեր 2023թ << սնանկության դատարանի որոշմամբ <Ուստր Մամիկոն > ՍՊԸ – ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի լիազորությունները դադարեցված են ,որով << վերաքննիչ քաղաքացիական դատարանը 02.02.2024թ որոշմամբ որոշել է <Ուստր Մամիկոն> ՍՊԸ -ի սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանի կողմից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել և լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու մասին վերացնել :

Սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը << սնանկության դատարանին գրություն է ներակայցրել ,որով խնդրել է վերաքննիչ քաղաքացիական դատարանի 02 փետրվար 2024թ որոշմանը ընթացք չտալ :

Հաշվի առնելով այն հանգամանքը ,որ 09 հոկտեմբեր 2023թ << սնանկության դատարանի որոշմամբ <Ուստր Մամիկոն > ՍՊԸ – ի սնանկության գործով Հովհաննես Եղյանի լիազորությունները դադարեցված են ,նշանակված է նոր գործով կառավարիչ և դիմում բողոքը ներկայացվել է 04 ապրիլ 2024թ հետևաբար այն ենթակա չէ քննարկման, սակայն սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Եղյանը կարգապահական հանձնաժողովին տեղեկացրել է այն բավականին ուշ ,բազմաթիվ նիստեր հրավիրելուց հետո ,ինչի արդյունքում ոչ հարգալից վերաբերմունք է ներկայացրել Կարգապահական հանձնաժողովի անդամներին ,ուստի առաջարկվեց Եղյան Հովհաննեսի նկատմամբ < Սնանկության մասին> << օրենքի 27.2.հոդվածի 2) կետը կառավարիչների մասնագիտական վարքագծի կանոնները և նույն օրենքի 27.5.հոդվածի 2 կետի Կառավարչի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժերի շրջանակներում կիրառել կառավարչի նկատմամբ կարգապահական տույժերից մեկը այն է նախազգուշացում :

Առաջարկը դրվեց քվեարկության:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 3

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

<Ուստր Մամիկոն > ՍՊԸ – ի սնանկության գործով Հովհաննես Եղյանի նկատմամբ իրեն

վերապահված լիազորությունների շրջանակներում <«Սնանկության մասին» ՀՀ
օրենքի հոդված 27.5-ով սնանկության կառավարչի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝
նախազգուշացում :

2.Սույն Որոշումը և նյութերը ներկայացնել «ՍԳԿԿ» ԻԿԿ համապատասխան կառավարման մարմնի հաստատմանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Արմինե Մովսիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ռուբեն Խալաթյան

Արմենակ Ադամյան

Հարություն Գևորգյան